Կազմված է 05.06.22024թ. և բաղկացած է 24 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Կառավարության 2016 թվականի
Հունիսի 30–ի N 771-Ն որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 22.09.2016 թ.
գրանցման համար 222.160.928292
ՀՎՀՀ՝ 01505821

22.06.2016թ. գրանցված կանոնադրության

թիվ 001 3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից "10" 01 2024թ.

աշխատակից՝

Ջ. Միրզոյան

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
02
ԴԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

(ՀՀ կառավարության 2019թ. նոյեմբերի 21–ի N 1652-Ն, 2021թ. հուլիսի 29-ի N 1248-Ն և 2021թ. սեպտեմբերի 08-ի N 1448-Ն որոշումներով, Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2019թ. սեպտեմբերի 02–ի թիվ 1, 2019թ. նոյեմբերի 27–ի թիվ 2 և 2024թ. մայիսի 16-ի թիվ 11 որոշումներով կատարված փոփոխություններով)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական Ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ (ՀՖԿՍՊԻ) կրթական, գիտահետազոտական, ինքնավար բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է ֆիզիկական կրթության, առողջարարական գիտությունների, սպորտային մանկավարժության և մարզչության, սպորտի կառավարման և կազմակերպման բնագավառներում կրթական գործընթացների, գիտական և կիրառական հետազոտությունների կազմակերպմանը՝ բարձրագույն, հետբուհական, ինչպես նաև հանրակրթական, միջին մասնագիտական կրթության մակարդակներում և լրացուցիչ, շարունակական կրթությամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով և կրթական ծրագրերով:

2. Ինստիտուտը «Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (պետական գրանցման համարը՝ 273.210.03321) իրավահաջորդն է (փոխանցման ակտին համապատասխան):

3. Ինստիտուտն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ նաև Օրենք) «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, ենթաօրենսդրական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

4. Ինստիտուտի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության: Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է:

5. Ինստիտուտի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ.
2) հայերեն կրճատ՝ «ՀՖՍԿՊԻ» հիմնադրամ.
3) ռուսերեն լրիվ՝ «Государственный институт физической культуры и спорта Армении» фонд.
4) ռուսերեն կրճատ՝ ГИФКСА фонд.
5) անգլերեն լրիվ՝ «Armenian State Institute of Physical Culture and Sport» foundation.
6) անգլերեն կրճատ՝ «ASIPCS» foundation:

Ինստիտուտի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0070, Ալեք Մանուկյան 11:

II. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

7. Ինստիտուտը ստեղծված է համարվում պետական գրանցման պահից և գործում է անժամկետ:

8. Ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում և դրանից դուրս կարող է ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես նաև հիմնարկներ, որոնք գործում են Ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրություններին համապատասխան:

9. Ինստիտուտն իրավաբանական անձ է, ունի հիմնադրի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

10. Ինստիտուտն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

11. Հիմնադրի կողմից Ինստիտուտին հանձնված գույքը Ինստիտուտն օգտագործում է իր կանոնադրությամբ և հիմնադրի հետ կնքված պայմանագրով սահմանված կարգով:

12. Ինստիտուտի սեփական միջոցներով ձեռք բերված կամ այլ աղբյուրներից ձևավորված գույքը, ներառյալ դրամական միջոցները, բաժնետոմսերը, արժեթղթերը և մտավոր սեփականության օբյեկտները Ինստիտուտի սեփականությունն են:

13. Ինստիտուտը կարող է ունենալ իր անվանումը պարունակող՝ Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթղթեր և այլ անհատականացման միջոցներ:

14. Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Ինստիտուտի պարտավորությունների համար, իսկ Ինստիտուտը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար: Ինստիտուտն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով:

15. Ինստիտուտի իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

III. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Ինստիտուտի նպատակներն են՝

1) սպորտի, առողջարարական գիտությունների, ֆիզիկական կրթության, հետազոտության և (կամ) գիտության ոլորտներում մրցունակ և որակյալ մասնագետների պատրաստումը.

2) կրթության, հետազոտության և (կամ գիտության) որակի ապահովումը, շարունակական բարելավումը.

3) կրթություն-հետազոտություն (գիտություն) ինտեգրացման գործընթացների խրախուսումը, արդյունավետության բարձրացումը, արդյունքների նպատակային օգտագործումը.

4) կրթական գործընթացների անընդհատության, շարունակականության, թափանցիկության և մրցունակության ապահովումը.

5) սպորտի, առողջարարական գիտությունների, ֆիզիկական կրթության ոլորտներում ստեղծագործական, նորարարական, ուսումնական, մեթոդական,

խորհրդատվական, գիտական, հետազոտական և գիտամանկավարժական գործունեության իրականացումը.

(Փոփ. 17.03.2021թ. թիվ ԵԴ/22737/02/20 դատարանի վճռով)

17. Ինստիտուտի նպատակների իրականացման խնդիրներն են՝

1) առողջարարական գիտությունների (ֆիզիկական վերականգնում, սպորտային սննդաբանություն, կինեզոլոգիա, սպորտային հոգեբանություն և հարակից մասնագիտություններ), ֆիզիկական կրթության, մարզչամանակավարժական կրթության, սպորտի կառավարման և կազմակերպման (սպորտային տուրիզմ, սպորտի կառավարում և մարքետինգ, սպորտային լրագրություն և հարակից մասնագիտություններ), գիտության, հետազոտության կրթական, գիտական ծրագրերի բովանդակության շարունակական բարելավումը, ժամանակակից մեթոդների մշակումը և ներդրումը, զարգացումը, մանկավարժական կրթության արդիականացումն ու կատարելագործումը.

2) սովորողների և աշխատողների համար անհրաժեշտ կրթական, հետազոտական պայմաններով և ռեսուրսներով ապահովումը.

3) պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացմանն ուղղված գործողությունների իրականացումը.

4) ֆիզիկական կրթության, սպորտի և առողջարարական գիտությունների հետազոտական, նորարարական գործունեության համակարգերի ներդրումը, զարգացումը և տնտեսության հետ դրանց ինտեգրումը.

5) սպորտային, առողջարարական գիտությունների, ֆիզիկական կրթության, հետազոտության և (կամ) գիտության միջազգայնացման շարունակական ընդլայնումը"

6) ֆիզիկական ակտիվության, առողջ ապրելակերպի դերի բարձրացմանն ուղղված հումանիտար, առողջարարական, վերականգնողական հասարակական գործունեության իրականացումը.

7) առողջարարական գիտությունների, ֆիզիկական, մարզչամանկավարժական կրթության, սպորտի կառավարման և կազմակերպման ոլորտների համար բարձր որակավորում ունեցող մասնագետների, ինչպես նաև գիտամանկավարժական, հետազոտող կադրերի պատրաստումը, վերապատրաստումը, որակավորման բարձրացումը.

8) հետազոտական և (կամ) գիտական արդյունքների ներդրումը կրթական, ուսումնական, մանկավարժական գործընթացներում.

9) սպորտի բնագավառում ֆիզիկական վերականգնողական, բժշկական ապահովման, հավաքական թիմերի համալիր գիտամեթոդական ծրագրերի իրականացումը:

18. Ինստիտուտը սահմանված նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ իրավասու է՝

1) կազմակերպել բարձրագույն, հետբուհական, ինչպես նաև հանրակրթական, միջին մասնագիտական, լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրեր.

2) ըստ կրթական ծրագրերի՝ կազմակերպել դիմորդների, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց ընդունելությունն ու ուսումնական գործընթացը.

3) պետական կրթական պահանջներին համապատասխան՝ մշակել և հաստատել ուսումնական պլաններ, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական և առարկայական ծրագրեր.

4) ինքնուրույն որոշել ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների ներդրման, սովորողների ընթացիկ և ամփոփիչ գնահատման, ատեստավորման ձևերի և կանոնակարգերի ընտրության հարցերը.

5) շնորհել մասնագիտական կրթության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված որակավորման աստիճաններ.

6) ապահովել տեղական և միջազգային գիտական, կրթական, հետազոտական ծրագրերին մասնակցությունը և իրականացումը, կիրառական և (կամ) գիտական հետազոտությունների կատարումը.

7) ապահովել հետազոտական, գիտական աշխատանքներում սովորողների ակտիվ և անմիջական մասնակցությունը.

8) շնորհել Ինստիտուտի պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգևատրելու Ինստիտուտի մեդալով և (կամ) պատվոգրով.

9) սահմանելու իր կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման կարգը, օրենքով սահմանված կարգով ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, ֆակուլտետներ, ամբիոններ, լաբորատորիաներ, կենտրոններ, քոլեջներ, դպրոցներ, ինչպես նաև կրթական գործընթացների կազմակերպման և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության այլ տեսակների իրականացման համար անհրաժեշտ այլ կառուցվածքային ստորաբաժանումներ.

10) ինքնուրույն որոշել Ինստիտուտի հաստիքացուցակը, իրականացնելու աշխատողների ընտրությունը, նշանակումը, առաջխաղացումը և ատեստավորումը.

11) մշակել և ներդնել Ինստիտուտիի ընտրովի պաշտոնների ու պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության քաղաքականությունը և կարգերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

12) տնօրինել իր ֆինանսական միջոցները, ինքնուրույն որոշել դրանց օգտագործման ուղղությունները՝ ներառյալ իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման քաղաքականությունը և չափերը.

13) ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ սովորողների և աշխատողների առողջության պահպանման, կենցաղի, սննդի, հանգստի, բուժման կազմակերպման, ֆիզիկական և հոգևոր զարգացման համար.

14) կազմակերպել պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական աշխատողների որակավորման բարձրացման լրացուցիչ կրթական ծրագրեր.

15) կնքել պայմանագրեր ու համաձայնագրեր Հայաստանի Հանրապետությունում գործող և օտարերկրյա ուսումնական հաստատությունների, գիտական, հետազոտական հիմնարկների, գիտակրթական կենտրոնների, սպորտային կենտրոնների, պետական մարմինների, այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, իրականացնել համատեղ կրթական ծրագրեր հայաստանյան և արտասահմանյան բուհերի հետ,

16) սահմանված կարգով օտարերկրյա պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ.

17) իրեն՝ օգտագործման իրավունքով տրամադրված գույքը հանձնել վարձակալության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

18) իրականացնել Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան այլ գիտակրթական, հետազոտական և սպորտային հաստատությունների հետ համագործակցություն, փորձի փոխանակում, ինչպես նաև՝ համատեղ հետազոտական, գիտական, ուսումնական, սպորտային միջոցառումներ ու համալիր ծրագրեր, այդ թվում՝ միջազգային գիտաժողովներ, համաժողովներ, աշխատանքային հանդիպումներ, գիտակրթական ցուցահանդեսներ և այլն.

19) կազմակերպել տարբեր մարզաձևերով զբաղվող մարզիկների առողջական վիճակի գնահատման նպատակով պարբերաբար բժշկական քննություններ.

20) իրականացնել սպորտային վնասվածքների և հիվանդացության (մարզիկների առողջական վիճակի շեղումների գնահատման) կանխարգելմանն ուղղված միջոցառումներ.

21) իրականացնել մարզիկների վերականգնողական, սպորտային աշխատունակության բարձրացմանն ուղղված միջոցառումներ.

22) ապահովել հավաքական թիմերին գիտական խմբերով.

23) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ չարգելված այլ գործունեություն:

19. Արգելվում է Ինստիտուտում քաղաքական, հասարակական և կրոնական կազմակերպությունների, դրանց կազմակերպական կառույցների ստեղծումն ու գործունեությունը՝ բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական, սովորողների և շրջանավարտների կազմակերպությունների ու միությունների:

IV. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

20. Ինստիտուտը կարող է անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով՝

1) բարձրագույն, հետբուհական կրթության, ինչպես նաև հանրակրթական, միջին մասնագիտական, լրացուցիչ, շարունակական կրթության կազմակերպում.

2) նախապատրաստական դասընթացների կազմակերպում.

3) գիտական, հետազոտական, գիտամանկավարժական աշխատանքների իրականացում.

4) խորհրդատվական ծառայությունների մատուցում.

5) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում.

6) Ինստիտուտի աշխատողների, սովորողների և այլ անձանց հանրային սննդի, հանգստի, բուժման, կենցաղի կազմակերպում և սպասարկում.

7) Ինստիտուտի իրավասությունների վերապատրաստումների իրականացում, ծառայությունների մատուցում.

8) գիտական, կրթական աշխատաժողովների, համաժողովների, կոնֆերանսների և այլ դասընթացների ուսուցման կազմակերպում:

IV. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

21. Ինստիտուտի շահառուները կրթական, հետազոտական, գիտական, գիտաարտադրական, սպորտի բնագավառներին առնչություն ունեցող ֆիզիկական և իրավաբանական անձինք են:

(Փոփ. 17.03.2021թ. թիվ ԵԴ/22737/02/20 դատարանի վճռով)

V. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Ինստիտուտն իրավունք ունի՝

1) անարգել տարածելու տեղեկություններ իր գործունեության մասին.

2) հիմնադրելու մամուլի և այլ զանգվածային լրատվության միջոցներ.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով ստանալու տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

4) ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ լինելու նրանց մասնակիցը.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան՝ անդամակցելու միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին.

6) պայմանագրային կարգով ներգրավելու ներդրողների՝ ինստիտուտի հիմնական և ձեռնարկատիրական գործունեության ընդլայնման նպատակով, ընդ որում, բացառելով հիմնադրի կողմից ինստիտուտի օգտագործմանը հանձնված գույքի, այդ թվում՝ շենքերի, շինությունների և հողատարածքների գրավադրումը, օտարումը կամ անհատույց օգտագործման հանձնումը.

7) իրականացնելու օրենքով չարգելված ցանկացած այլ գործունեություն:

23. Ինստիտուտը պարտավոր է՝

1) հրապարակել ամենամյա հաշվետվություն իր գործունեության մասին, օրենքով նախատեսված դեպքում.

2) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ.

4) ապահովել սույն կետում նշված հաշվետվություններին ծանոթանալու մատչելիությունը, թափանցիկությունը.

5) իրականացնել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

VI. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

24. Ինստիտուտի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի, ինստիտուտի գիտական խորհրդի և ինստիտուտի ռեկտորի գործառույթների իրականացմամբ:

25. Ինստիտուտն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով:

26. Ինստիտուտի կառավարման մարմիններն են՝

1) ինստիտուտի հոգաբարձուների խորհուրդը.

2) գիտական խորհուրդը

3) տնօրենը (այսուհետ՝ ռեկտոր):

27. Ինստիտուտի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է:Հոգաբար-ձուների խորհուրդը ձևավորվում է ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների, հիմնադրի և լիազոր մարմնի ներկայացուցիչներից: Ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի անդամների թիվը 20 է:

(27-րդ կետը փոփ. Հոգաբարձուների խորհրդի 16.05.2024 N 11 որոշում)

28. Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմից հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումները: Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումներից առաջադրված թեկնածուներն ընտրվում են ինստիտուտի գիտական խորհրդում և ներկայացվում լիազոր մարմին: Պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված հոգաբարձուների խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

29. Ինստիտուտի սովորողների ներկայացուցիչներից հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ուսանողական խորհուրդը: Ուսանողական խորհրդի կողմից հոգաբարձության խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել բարձր առաջադիմություն և ակտիվ հասարակական դիրքորոշում ունեցող ցանկացած սովորող: Ուսանողական խորհուրդն ընտրում է ֆակուլտետների ուսանողական խորհուրդների կողմից առաջադրված թեկնածուներին և ներկայացնում լիազոր մարմին: Սովորողների կողմից ընտրված հոգաբարձուների խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը և խորհրդի անդամի լիազորություններն իրականացնում են Ինստիտուտում իրենց սովորելու ժամանակահատվածում:

30. Հիմնադրի անունից հոգաբարձուների խորհրդի անդամներ է առաջադրում Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանցից (խորհրդի կազմի 25 տոկոսը):

31. Լիազոր մարմնի կողմից հոգաբարձուների խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչներ, ինչպես նաև Ինստիտուտի հետ համագործակցող գործատուներ (խորհրդի կազմի 25 տոկոսը):

32. Առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա հոգաբարձուների խորհրդի կազմը, լիազոր մարմնի ներկայացմամբ, հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

33. Հոգաբարձուների խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած, գործունակ ֆիզիկական անձինք, ովքեր չեն կարող լինել Ինստիտուտի այլ մարմնի անդամներ:

34. Հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում են հոգաբարձուների խորհրդի անդամները՝ խորհրդի անդամների կազմից հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Հոգաբարձուների խորհրդի նախագահ չի կարող լինել Ինստիտուտ սովորողների ներկայացուցիչներից:

35. Ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Հոգաբարձուների խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում՝ նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են հոգաբարձուների խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը:

36. Հոգաբարձուների խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) ներկայացնելու առաջարկություններ հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) նախապատրաստելու և հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնելու հարցեր, առաջարկություններ և որոշումների նախագծեր.

3) ստանալու տեղեկություններ Ինստիտուտի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի վերաբերյալ.

4) ստանալու իր պարտականությունների կատարմամբ պայմանավորված ծախսերի փոխհատուցում:

37. Հոգաբարձուների խորհրդի անդամները պարտավոր են՝

1) մասնակցել հոգաբարձուների խորհրդի նիստերին.

2) իրենց պարտականությունների կատարման ընթացքում գործել՝ ելնելով Ինստիտուտի շահերից:

38. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

1) իր գրավոր դիմումի համաձայն.

2) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու դեպքում.

4) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.

5) եթե դադարել են Ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսի կամ կեսից ավելիի լիազորությունները.

5) ըստ պաշտոնի առաջադրվելու դեպքում՝ պաշտոնից ազատվելու հետևանքով.

6) մահվան դեպքում.

7) իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.

8) նրան առաջադրած անձի որոշմամբ, եթե առաջադրողը Հայաստանի Հանրապետությունն է կամ համայնքը:

39. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է նախկին անդամի նշանակման կարգով՝ ոչ ուշ, քան հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին ռեկտորի ծանուցումն ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում: Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում ռեկտորը տեղեկացնում է հիմնադրին, հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակած անձանց կամ մարմիններին, Ինստիտուտի մարմիններին:

40. Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են տարեկան առնվազն երկու անգամ՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են հրավիրվել նաև հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են անցկացվել տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև հարցման կարգով: Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների մեծամասնությամբ: Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ժամանակ հոգաբարձուների խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Եթե հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

41. Խորհրդի նիստերն արձանագրվում են:

42. Հոգաբարձուների խորհրդի իրավասություններն են՝

1) իր աշխատակարգի հաստատումը.

2) ռեկտորի ընտրության կանոնակարգի մշակումը, հաստատումը, ընտրության կազմակերպումը, ռեկտորի ընտրության և լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

3) ռեկտորի տարեկան հաշվետվության լսումն ու գնահատումը.

4) Ինստիտուտի գործունեության ռազմավարական և տարեկան ծրագրերի հաստատումը.

5) Ինստիտուտի կառուցվածքի հաստատումը.

6) Ինստիտուտի հաստիքացուցակի հաստատումը.

7) Ինստիտուտի եկամուտների ու ծախսերի տարեկան նախահաշվի և դրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների ու Ինստիտուտի գործունեության մասին տարեկան հաշվետվությունների և տարեկան հաշվեկշռի հաստատումը.

8) տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշման ընդունումը.

9) Ինստիտուտի գործունեության, այդ թվում՝ ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունը, ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող անձի ընտրությունը.

10) հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

11) ռեկտորի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանների, հրահանգների և ցուցումների կասեցումը կամ դրանք ուժը կորցրած ճանաչելը.

12) իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

13) Ինստիտուտի լուծարման հարցով դատարան դիմելու մասին որոշման ընդունումը.

14) Ինստիտուտի լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը, լուծարման կարգի ու ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

15) Ինստիտուտի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

16) օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Ինստիտուտի մյուս մարմիններին օրենքով չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:

43. Հոգաբարձուների խորհրդի իրավասությունը հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

44. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու Ինստիտուտի բոլոր փաստաթղթերին:

45. Հոգաբարձուների խորհրդի նախագահը՝

1) հրավիրում է հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում դրանք.

2) ստորագրում է հոգաբարձուների խորհրդի որոշումները.

3) հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ կարող է ստեղծել ժամանակավոր հանձնախմբեր և նշանակել դրանց նախագահներին, մասնավորապես, սույն կանոնադրությամբ նախատեսված՝ Ինստիտուտի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման (ստուգում, ուսումնասիրում և այլն) և սույն կանոնադրության 42-րդ կետի 8-րդ, 9-րդ, 15-րդ ու 16-րդ ենթակետերով նախատեսված հարցերի նախնական քննարկում իրականացնելու և դրանց վերաբերյալ հոգաբարձուների խորհուրդ եզրակացություններ (տեղեկանքներ) ներկայացնելու համար.

4) կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի նիստերի արձանագրության վարումը.

5) հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացնում հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշման նախագիծը.

6) Ինստիտուտի անունից ռեկտորի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:

46. Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, կատարում է խորհրդի անդամներից մեկը:

47. Ինստիտուտի գիտական խորհուրդը (այսուհետ՝ գիտական խորհուրդ) ձևավորվում է սույն կանոնադրությանը և իր կանոնակարգին համաձայն, հանդիսանում է Ինստիտուտի ուսումնական, մեթոդական, գիտական, հետազոտական, մանկավարժական և սպորտային գործունեությունը պլանավորող, համակարգող և կարգավորող կոլեգիալ մարմին է:

48. Գիտական խորհուրդը գործում է ռեկտորի նախագահությամբ: Գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի նիստերը

գումարվում են տարեկան առնվազն 6 անգամ: Անհրաժեշտության դեպքում կարող են գումարվել գիտական խորհրդի արտահերթ նիստեր:

49. Գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը.

2) Համակարգում է Ինստիտուտի, կրթական, հետազոտական և գիտական գործունեությունը.

3) ռեկտորի ներկայացմամբ՝ հոգաբարձուների խորհուրդ է ներկայացնում առաջարկություն կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու, լուծարելու վերաբերյալ.

4) հատկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում քննարկում և ընդունում է որոշումներ Ինստիտուտի՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների ընդունելության վերաբերյալ.

4) հաստատում է ֆակուլտետների, կենտրոնների, լաբորատորիաների, ամբիոնների, Ինստիտուտների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը, Ինստիտուտի աշխատանքային, գիտական, կրթական, հետազոտական և սպորտային հիմնական գործունեությունը կանոնակարգող այլ ներքին իրավական ակտերը.

5) քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը՝ ըստ մասնագիտությունների, սահմանում է ուսման վարձավճարների չափերը.

6) քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական, հետազոտական հաղորդումներ Ինստիտուտում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.

7) քննարկում է Ինստիտուտի միջազգային կապերի ուղղությունները, համագործակցության ծրագրերը.

8) սահմանված կարգով շնորհում է գիտական կոչումներ, ինչպես նաև պատվավոր պրոֆեսորի, պատվավոր դոկտորի և այլ կոչումներ, մեդալներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, ներկայացնում է թեկնածություններ՝ կոչումներ, պարգևներ, հանրապետական և միջազգային մրցանակներ ստանալու համար.

9) հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների և պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունների ընթացակարգերը.

10) հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները.

11) Ինստիտուտի գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ լիազոր մարմին է ներկայացնում առաջարկություններ Ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ.

12) քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր.

13) ըստ անհրաժեշտության՝ ստեղծում է գիտական խորհրդին կից գործող մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում դրանց կառուցվածքը, կազմերի ձևավորման կարգը և աշխատակարգը.

14) հաստատում է Ինստիտուտի ուսումնական, կրթական, գիտական, հետազոտական և սպորտային ոլորտների գործունեության վերաբերող քաղաքականությունները, հայեցակարգերը, ուղեցույցերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, Ինստիտուտի գործունեության տարեկան պլան-ժամանակացույցը.

15) կազմակերպում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնի վարիչների, պրոֆեսադասախոսական կազմի, Ինստիտուտի կազմում գործող գիտական, հետազոտական կենտրոնների ղեկավարների փակ, գաղտնի քվեարկությունը.

16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքից և սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

50. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե մտնում են ռեկտորը, որը գիտական խորհրդի նախագահն է, պրոռեկտորները, համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ընտրովի կամ նշանակովի անդամներ՝ գիտական խորհրդի կանոնակարգին համապատասխան: Ի պաշտոնե և ռեկտորի կողմից նշանակվող անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի թվակազմի 50 տոկոսը: Ինստիտուտի գիտական խորհրդի անդամների թվի քսանհինգ տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրում է ուսանողական խորհուրդը, իսկ ընտրությունն իրականացնում է Ինստիտուտի ուսանողական խորհուրդը: Գիտական խորհրդի ընդհանուր անդամների թիվը նվազագույնը 30 է, առավելագույնը՝ 40:

51. Գիտական խորհրդի կազմակերպումն ու գործունեությունը կարգավորվում են գիտական խորհրդի կանոնակարգով:

51.1 Ինստիտուտի գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր՝ նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե որոշում չի ընդունվում փակ գաղտնի քվեարկության մասին:

51.2 Գիտական խորհրդի քարտուղարը նշանակվում է ռեկտորի հրամանով:

51.3 Գիտական խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել գիտական խորհրդի նախագահի առաջարկով, ինչպես նաև գիտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Գիտական խորհրդի նախագահն արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ պահանջն ստանալուց հետո 10-օրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը:

52. Ինստիտուտի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ինստիտուտի ռեկտորը:

53. Ռեկտորի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով:

54. **Ռեկտորի իրավասություններն են՝**

1) Ինստիտուտի ուսումնական, կրթական, գիտական, հետազոտական, տնտեսական, ֆինանսական, սպորտային, միջազգային և այլ գործունեության ղեկավարումը.

2) Ինստիտուտի գույքի տնօրինումը, այդ թվում՝ ֆինանսական միջոցների, Ինստիտուտի անունից գործարքներ կնքելը.

3) Ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ներկայացնելը.

4) առանց լիազորագրի հանդես գալը.

5) լիազորագրեր տալը.

6) բանկերում Ինստիտուտի հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ բացելը.

7) Ինստիտուտի գիտական խորհրդի, ռեկտորատի, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպումը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը, Ինստիտուտի գիտական խորհրդի, ռեկտորատի նիստեր հրավիրելը.

8) Ինստիտուտի հոգաբարձուների խորհուրդ տարեկան հաշվետվություն ներկայացնելը.

9) Ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը, զարգացման ռազմավարական ծրագրերը, Ինստիտուտի կանոնադրության կամ դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին որոշումների նախագծերը, Ինստիտուտի կառուցվածքը և հաստիքացուցակը ներկայացնելը.

10) Ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի և գիտական խորհրդի որոշումների կատարման ապահովումը.

11) Ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի հաստատմանը կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու կամ լուծարելու վերաբերյալ նախագծեր ներկայացնելը.

12) աշխատողների լիազորությունների, պաշտոնական պարտականությունների սահմանումը.

13) սահմանված կարգով, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր կնքելը.

14) իր իրավասության սահմաններում հրամանների, հանձնարարականների արձակումը, կատարման համար պարտադիր ցուցումներ տալը և դրանց կատարման նկատմամբ վերահսկումը.

15) սահմանված կարգով աշխատանքի ընդունումը և աշխատանքից ազատումը Ինստիտուտի աշխատողներին, այդ թվում՝ առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին ու աշխատողներին.

16) աշխատակիցների և սովորողների նկատմամբ խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելը"

17) արհեստակցական կազմակերպության նախագահի հետ կոլեկտիվ պայմանագիր կնքելը.

18) իր բացակայության ժամանակ ռեկտորի պարտականությունների կատարումը պրոռեկտորներից մեկին հանձնարարելը.

19) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Ինստիտուտի այլ կառավարման մարմիններին չվերապահված լրազորությունների իրականացումը:

55. Ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի գիտական աստիճան և առնվազն հինգ տարվա ակադեմիական և գիտական գործունեության ստաժ: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:

(55 կետի փոփ. հոգաբարձուների խորհրդի 16.08.2021թ. թիվ 7 որոշում)

56. Ռեկտորն ընտրվում է բաց մրցույթով՝ հոգաբարձուների խորհրդի նիստում, փակ, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը:

57. Ռեկտոր ընտրված անձի լիազորությունները դադարեցվում են օրենքով սահմանված կարգով՝ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

58. Ռեկտորի ընտրության արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում՝ սահմանված կարգով նշանակվում է ռեկտորի նոր ընտրություն:

59. Ռեկտոր չի կարող ընտրվել այն անձը՝

1) ով դատապարտվել է հանցագործություն կատարելու համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով մարված կամ հանված չէ.

2) ում օրենքի համաձայն արգելվում է զբաղեցնել ղեկավար պաշտոններ.

3) ով նախընթաց 3 տարվա ընթացքում եղել է սնանկացման պատճառով լուծարված և պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավարը:

60. Ռեկտոր ընտրված անձի լիազորությունները դադարեցվում են օրենքով սահմանված կարգով՝ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, եթե՝

1) նա դիմում է դրա մասին.

2) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

3) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,

5) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում առկա են համապատասխան հիմքեր:

61. Ինստիտուտի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է: Ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի և Ինստիտուտի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ռեկտորատն իր կանոնակարգով, իրեն ընձեռված լիազորությունների շրջանակում քննարկում և խորհրդակցական կարծիք է ներկայացնում Ինստիտուտի գործունեության ոլորտներին վերաբերյալ:

62.Ինստիտուտի ռեկտորատի կազմը և գործունեությունը սահմանվում են ռեկտորատի կանոնակարգով:

VII. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

63. Ինստիտուտի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարել կարող է ինչպես Ինստիտուտի հիմնադիրը, այնպես էլ Ինստիտուտի հոգաբարձուների խորհուրդը՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

64. Հոգաբարձուների խորհրդի կողմից Ինստիտուտի կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները չեն կարող վերաբերել Ինստիտուտի նպատակներին կամ շահառուներին:

VIII. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

65. Ինստիտուտն ինքնուրույն է պլանավորում իր գործունեությունը, մշակում զարգացման հեռանկարները և ընդունում իր գործունեության վերաբերյալ որոշումներ:

66. Ինստիտուտի՝ այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ գործունեության բոլոր հարաբերություններն իրականացվում են պայմանագրային (համաձայնագրային) հիմունքներով:

67. Ինստիտուտն ինքնուրույն է ընտրում իր կողմից կնքվող պայմանագրերի առարկան և պայմանները:

68. Իր կանոնադրական գործունեությունն իրականացնելիս՝ Ինստիտուտն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ ընդունելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող ցանկացած որոշում:

69. Ինստիտուտի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է միայն այն դեպքերում, երբ դա համապատասխանում և (կամ) ծառայում է իր կանոնադրական նպատակների իրականացմանը: Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակիցը:

70. Ինստիտուտի սեփականությունը հանդիսացող և նրան օգտագործման հանձնված ընդհանուր ակտիվների արժեքի 20 տոկոսից ավելին գերազանցող գործարքները կնքվում են Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությամբ:

71. Ինստիտուտի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ Ինստիտուտի մարմինների անդամների, ինչպես նաև Ինստիտուտի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և, Ինստիտուտի մարմինների անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված, փոխհատուցման ենթակա ծախսերի, ինչպես նաև այն դեպքերի, երբ Ինստիտուտի մարմինների անդամները, ինչպես նաև Ինստիտուտի աշխատողները սույն կանոնադրությամբ նախատեսված շահառուներ են:

IX. ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

72. Ինստիտուտում իրականացվում է բարձրագույն մասնագիտական կրթություն՝ բակալավրի, մագիստրոսի կրթական ծրագրերով և հետբուհական մասնագիտական կրթություն՝ հետազոտողի ծրագրով (ասպիրանտուրա, հայցորդություն): Ինստիտուտը կարող է իրականացնել նաև հանրակրթական, միջին մասնագիտական, լրացուցիչ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կրթական ծրագրեր:

73. Ինստիտուտում ուսուցումը կարող է իրականացվել առկա, հեռակա, հեռավար և դրսեկություն (էքստեռն) ձևերով:

74. Օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վճարովի հիմունքներով ուսուցումն իրականացվում է լիազոր մարմնի սահմանած կարգի համաձայն:

75. Ինստիտուտում սահմանվում են ուսումնական պարապմունքների հետևյալ ձևերը՝ դասախոսություն, մեթոդական, գործնական (սեմինար), լաբորատոր և անհատական պարապմունքներ, ուսումնական, մանկավարժական, մարզչական, կլինիկական հետազոտական և սահմանված այլ պրակտիկա, խորհրդատվություն և այլն:

76. Ուսուցման բովանդակությունը և մասնագիտական ուղղվածությունը տարբերակվում են՝ համաձայն ուսումնական մասնագիտությունների, որոնց ցանկը, իրականացվող յուրաքանչյուր հիմնական կրթական ծրագրի համար, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, յուրաքանչյուր մասնագիտության շրջանակներում, կարող են ստեղծվել մասնագիտացումներ:

77. Յուրաքանչյուր մասնագիտության համար ուսումնական գործընթացի կազմակերպումը կարգավորվում է մասնագիտության ուսումնական պլանով, որով սահմանվում է համապատասխան կրթական ծրագրի բովանդակության բաշխումն ըստ ուսուցման տարիների, ուսումնական դասընթացների և առարկաների:

78. Ինստիտուտի՝ ըստ մասնագիտությունների, մասնագիտացումների ուսումնական պլանները և դասընթացները երաշխավորում են տարբեր կրթական փուլերում սովորողների ուսումնառության գործընթացը (մուտքը կրթական ծրագիր և ելքը ծրագրից) ՝ ապահովելով ակադեմիական կրեդիտների կուտակումը, փոխանցումը և որակավորման աստիճանների շնորհումը:

79. Ինստիտուտի պետական կրթական պահանջներին համապատասխան կազմում է կրթական ծրագրերը, որոնք հաստատվում են գիտական խորհրդի կողմից և ներկայացվում լիազոր մարմնին:

80. Ինստիտուտի ուսանողներին, ովքեր կատարել են ուսումնական պլանի պահանջները, թույլատրվում է մասնակցել ամփոփիչ պետական ատեստավորմանը:

81. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերով ուսումնառությունն ավարտած և Ինստիտուտի ամփոփիչ պետական ատեստավորումն անցած անձանց սահմանված կարգով շնորհվում է որակավորման համապատասխան աստիճան և հանձնվում է որակավորման շնորհված աստիճանը հաստատող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ)՝ համապատասխան ներդիրով: Ավարտական փաստաթղթում նշվում են որակավորումը, մասնագիտությունը (մասնագիտացումները), կրթական ծրագրերը և ուսումնասիրված դասընթացները: Ավարտական փաստաթղթի օրինակելի ձևը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

82. Կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք:

83. Լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է Ինստիտուտի կողմից սահմանված նմուշի ավարտական փաստաթուղթ (վկայագիր, հավաստագիր):

84. Անցումն ուսուցման մեկ աստիճանից մյուսին կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ինստիտուտի կանոնակարգերով սահմանված կանոններով:

85. Ինստիտուտում կատարվում են ուսումնամեթոդական, մանկավարժական, մարզչական, առողջարարական գիտությունների գիտական, հետազոտական և փորձարարական աշխատանքներ, անցկացվում են գիտական համաժողովներ, խորհրդակցություններ, գիտաժողովներ:

86. Գիտական, հետազոտական, փորձարարական աշխատանքներին, համաժողովներին, գիտաժողովներին, խորհրդակցություններին կարող են մասնակցել Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը, գիտական աշխատողները, ասպիրանտները, հայցորդները և ուսանողները, ինչպես նաև հաստիքային այլ աշխատողներ և պայմանագրային կարգով հրավիրված այլ մասնագետներ:

87. Ինստիտուտում գործում է որակի ներքին ապահովման և վերահսկման համակարգ, որի նպատակը կրթության որակի շարունակական բարելավումն է: Ինստիտուտը կազմակերպում է ներքին ու արտաքին գնահատման գործընթաց, հրապարակում է որակի գնահատման և (կամ) հավաստագրման չափանիշները, որակի գնահատում և (կամ) հավաստագրում իրականացնող կազմակերպության տված եզրակացությունները:

88. Ինստիտուտի ուսումնական, հետազոտական, գիտական գործունեությունը ֆինանսավորվում է հետևյալ աղբյուրներից՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից.

2) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա հիմնարկների, կազմակերպությունների ու ֆիզիկական անձանց նվիրատվություններից, դրամաշնորհներից.

3) բարեգործական նպատակով տրամադրվող միջոցներից.

4) նախաձեռնողական հետազոտությունների համար նախատեսված միջոցներից.

5) ուսման վճարներից և Հայաստանի Հանարապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

X. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

89. Ինստիտուտի կազմում կարող են գործել ֆակուլտետները, ամբիոնները, վարչությունները, բաժինները, լաբորատորիաները, գրադարանը, թանգարանը, մասնաճյուղերը

ակումբները, կենտրոնները, ուսումնական, հետազոտական, փորձարարական բազաները, և այլն: Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ և իրենց գործունեությունը կարգավորող կանոնակարգերով:

90. Ինստիտուտն իր կազմի մեջ մտնող բոլոր ստորաբաժանումների հետ միասին ուսումնական, գիտական, հետազոտական և արտադրական ամբողջություն է, որի միասնությունն ապահովվում է ուսումնական, կրթական և գիտահետազոտական գործընթացների կազմակերպումը՝ նրա բոլոր ստորաբաժանումների պարտադիր մասնակցությամբ:

91. Ինստիտուտի ֆակուլտետն առանձին մասնագիտությունների ու մասնագիտացումների գծով բարձրագույն կրթության տարբեր մակարդակներում և ուսուցման բոլոր ձևերով ուսումնական և գիտահետազոտական գործընթացների կազմակերպումն ու իրականացումն ապահովող կառուցվածքային ստորաբաժանում է:

92. Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, կրթության, գիտության, սպորտի և մշակույթի պետական կառավարման լիազորված մարմնի նորմատիվ ակտերին, սույն կանոնադրությանը և Ինստիտուտի կառավարման մարմինների կողմից ընդունված ներքին և (կամ) անհատական իրավական ակտերին:

93. Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից, ուսումնական և այլ ստորաբաժանումներից:

94. Ֆակուլտետի ղեկավար մարմիններն են ֆակուլտետի ուսումնագիտական խորհուրդը և ֆակուլտետի դեկանը: Ֆակուլտետի կառուցվածքը, իրավասությունները և գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի կանոնակարգով:

95. Ֆակուլտետի գործունեության կազմակերպումը և ղեկավարումն իրականացնում է ֆակուլտետի դեկանը՝ իր իրավասության սահմաններում և սույն կանոնադրության համաձայն: Ֆակուլտետի դեկանի պաշտոնն ընտրովի է: Դեկանի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կանոնակարգին համապատասխան:

96. Ամբիոնները (բաժինները, լաբորատորիաները և կառուցվածքային այլ ուսումնագիտական միավորները) Ինստիտուտի ֆակուլտետի ուսումնագիտական և հետազոտական գործընթացը կազմակերպող հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնք գործում են սույն կանոնադրության և ամբիոնների (բաժինների, լաբորատորիաների և կառուցվածքային այլ ուսումնագիտական միավորների) կանոնակարգերի հիման վրա:

97. Ամբիոնի (բաժնի, լաբորատորիայի, կառուցվածքային այլ ուսումնագիտական միավորի) գործունեության կազմակերպումը և ղեկավարումն իրականացնում է ամբիոնի, (բաժնի, լաբորատորիայի, կառուցվածքային այլ ուսումնագիտական միավորի) վարիչը (այսուհետ՝ վարիչ) ՝ իր իրավասության սահմաններում և սույն կանոնադրության համաձայն: Վարիչի պաշտոնն ընտրովի է: Վարիչի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կարգին համապատասխան:

98. Ինստիտուտում կարող են ստեղծվել համաինստիտուտային ամբիոններ, բաժիններ, կառուցվածքային այլ ուսումնագիտական միավորներ, որոնց գործունեության կարգը սահմանավում է վերջիններիս կանոնակարգերով:

99. Ֆակուլտետի մյուս ստորաբաժանումների ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի կանոնակարգով:

100. Ինստիտուտի արհեստակցական կազմակերպության և մշակութային, սպորտային, գիտական, ուսանողական կազմակերպությունների գործունեությունը

կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և իրենց կանոնադրություններով:

XI. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԸ

101. Ինստիտուտի աշխատողներն են պրոֆեսորադասախոսական և գիտամանկավարժական կազմերը, գիտական, հետազոտական, ուսումնաօժանդակ, վարչատնտեսական և այլ տարակարգերի աշխատողները, որոնց համալրումն իրականացվում է վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կանոնակարգով:

102. Ինստիտուտի սովորողներն են ուսանողները, դրսեկները, ասպիրանտները, հետազոտողները և հայցորդները:

103. Ինստիտուտի ուսանող է համարվում սահմանված կարգով ընդունված և բարձրագույն մասնագիտական կրթության կրթական որևէ ծրագրով ուսումնառող անձը:

104. Ինստիտուտի աշխատողների և սովորողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կանոնադրությամբ, ներքին կանոններով, կոլեկտիվ պայմանագրերով և Ինստիտուտի այլ իրավական ակտերով:

105. Ինստիտուտի աշխատողներն իրավունք ունեն՝

1) ունենալու կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ՝ մասնագիտական և աշխատանքային գործունեության համար.

2) ընտրելու և ընտրվելու Ինստիտուտի խորհրդում, գիտական խորհրդում, ֆակուլտետների խորհուրդներում.

3) մասնակցելու Ինստիտուտի գործունեությանն առնչվող խնդիրների քննարկմանը և ընտրովի մարմինների աշխատանքներին.

4) միավորվելու արհեստակցական կազմակերպություններում և այլ հասարակական կազմակերպություններում.

5) օգտվելու Ինստիտուտի գիտական, հետազոտական, կրթական, մշակութային, բուժական, սոցիալ-կենցաղային ստորաբաժանումների և գրադարանի ծառայություններից.

6) սահմանված կարգով ստանալու վճարվող և չվճարվող արձակուրդ.

7) նախատեսված ժամկետում և սահմանված չափով ստանալու աշխատավարձ, լրավճարներ, հավելավճարներ, ինչպես նաև պարգևատրումներ և խրախուսումներ (ներառյալ՝ դրամական)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և Ինստիտուտի կոլեկտիվ պայմանագրով սահմանված դեպքերում.

8) ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ.

9) բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հրամանները և կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

10) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

106. Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական և գիտամանկավարժական կազմերը, գիտաշխատողները և ուսանողներն օժտված են ակադեմիական ազատություններով:

107. Պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների, ասպիրանտների, դոկտորանտների ու հայցորդների համար ստեղծվում են գիտահետազոտական

աշխատանքներ կատարելու, դրանց արդյունքների ամրագրման և տարածման նպաստավոր պայմաններ՝ այդ նպատակներին հատկացված միջոցների սահմաններում:

108. Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական և գիտամանկավարժական կազմը, բացի նշված իրավունքներից, ունի՝

1) մասնագիտական գործունեության կազմակերպման ու նյութատեխնիկական ապահովման իրավունք.

2) գիտական հետազոտության ակադեմիական ազատության իրավունք.

3) պետական կրթության պահանջներին համապատասխան՝ ուսումնական դասընթացների բովանդակության, ծրագրերի ազատ որոշման իրավունք.

4) անհատական առանձնահատկություններին համապատասխանող և ուսումնական գործընթացի բարձր որակն ապահովող դասավանդման մեթոդների ու միջոցների ազատ ընտրության իրավունք.

5) համատեղությամբ գիտական, հետազոտական, մանկավարժական և այլ բնույթի աշխատանքներ կատարելու իրավունք.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ:

109. Գիտության, մանկավարժության և սպորտի բնագավառներում ակնառու նվաճումների համար Ինստիտուտի աշխատողներին շնորհվում են Ինստիտուտի մրցանակներ: Երիտասարդ գիտնականների համար սահմանվում է առանձին մրցանակ:

110. Ինստիտուտի աշխատողները պարտավոր են՝

1) պահպանել և կատարել սույն կանոնադրության, Ինստիտուտի ներքին կարգապահական կանոնների, ակադեմիական ազնվության, էթիկայի կանոնագրքերի և այլ ներքին իրավական ակտերի պահանջները.

2) կատարել ղեկավար մարմինների որոշումները.

3) մշտապես բարձրացնել իրենց մասնագիտական որակավորումը՝ յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ, սահմանված կարգով անցնել ատեստավորում.

4) սահմանված ժամկետում կատարել բոլոր հանձնարարականներն ու առաջադրանքները.

6) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

111. Ինստիտուտի սովորողներն իրավունք ունեն՝

1) ստանալու ժամանակակից կրթական և շուկայական պահանջներին համապատասխանող գիտելիքներ, հմտություններ և կարողություններ.

2) սահմանված կարգով ընտրելու մասնագիտությունը, ուսուցման ձևը, ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը.

3) ըստ նախասիրությունների մասնակցելու Ինստիտուտում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին.

4) գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը, Ինստիտուտի կառավարման մարմիններ ներկայացնելու ուսուցման որակի բարձրացման վերաբերյալ առաջարկություններ.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ընդգրկվելու և մասնակցելու Ինստիտուտի կառավարման մարմինների աշխատանքներին.

6) անվճար օգտվելու Ինստիտուտի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնաարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից.

7) միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում.

8) օգտվելու ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ինստիտուտի կողմից սահմանված կարգով ստանալու սահմանված չափի (ներառյալ անվանական) կրթաթոշակ.

10) ծանոթանալու Ինստիտուտի կանոնադրությանը և այլ իրավական փաստաթղթերին.

11) լիազոր մարմնի սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

12) ուսուցման առկա ձևով ուսումնառության դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ.

13) սահմանված կարգով տեղափոխվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները.

14) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտության ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական պահանջները.

15) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

112. Ինստիտուտի սովորողները պարտավոր են՝

1) կատարել սույն կանոնադրությունից և Ինստիտուտի այլ իրավական ակտերից բխող հանձնարարականները.

2) կատարել Ինստիտուտի ղեկավար մարմինների օրինական որոշումները և հրամանները.

3) ապահովել ուսումնական գործընթացի, անցկացվող գիտական հետազոտությունների արդյունավետությունը և նորարարությունը.

4) հաճախել ուսումնական ծրագրերով նախատեսված դասընթացներին.

5) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված այլ պարտականություններ:

113. Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վճարովի հիմունքներով ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

114. Ուսանողները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունեն ստանալու կրթաթոշակ: Ինստիտուտն իրավունք ունի սահմանելու անվանական կրթաթոշակներ և պետական կրթաթոշակների հավելավճարներ, ինչպես նաև ուսումը խրախուսող բարոյական ու նյութական խթանման այլ ձևեր:

115. Արգելվում են ուսանողներին ուսումնական գործընթացով չնախատեսված աշխատանքներում ներգրավելը՝ առանց վերջիններիս և (կամ) նրանց ծնողների (որդեգրողների ու հոգաբարձուների) համաձայնության, ինչպես նաև սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման միջոցների կիրառումը:

116. Վճարովի հիմունքներով կրթություն ստացող ուսանողները պարտավոր են պայմանագրով նախատեսված ժամկետում վճարել ուսման վարձը, որի չափը Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշում է Ինստիտուտը: Ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում ուսանողները կարող են հեռացվել Ինստիտուտից:

117. Այն ուսանողները, ովքեր կիսամյակի քննաշրջանի (քննաշրջանների) ընթացքում չեն կուտակում ուսումնական պլաններով նախատեսված անհրաժեշտ գումարային կրեդիտները, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են Ինստիտուտի ներքին կարգապահական կանոնները, ակադեմիական և էթիկայի կանոնագրքերը, Ինստիտուտի ռեկտորի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև Ինստիտուտից հեռացվելը:

Չի թույլատրվում սովորողին հեռացնել հիվանդության, արձակուրդի ընթացքում կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

118. Ինստիտուտի ուսանողության ինքնակառավարման և նրա օրինական շահերը պաշտպանող մարմինն ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է ուսանողների մասնակցությունը Ինստիտուտի կառավարմանը և համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր:

XII. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

119. Ինստիտուտի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Ինստիտուտի ֆինանսական գործունեությունը ստուգվում է անկախ աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված այլ անձի կողմից՝ առնվազն տարեկան մեկ անգամ: Ինստիտուտի հոգաբարձուների խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով կարող է կատարվել արտահերթ աուդիտ:

120. Յուրաքանչյուր տարի Ինստիտուտի հրապարակում է իր գործունեության հաշվետվությունը «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

XIII. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

121. Ինստիտուտը կարող է վերակազմակերպվել միայն հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:

122. Ինստիտուտը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

123. Ինստիտուտը լուծարումը նրա գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

124. Ինստիտուտը լուծարման մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով: Հիմնադրամի անունից՝ որպես շահագրգիռ անձ, կարող է հանդես գալ հոգաբարձուների խորհուրդը:

125. Ինստիտուտը կարող է լուծարվել «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

126. Պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատելու պահին Ինստիտուտը պարտատերերի նկատմամբ չունի պարտավորություններ, գույքն ուղղվում է Ինստիտուտի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում

64